



Ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամի գործառույթները

(Հոդված 64, Հոդված 65)

- Կարգավորեք ընտրական տեղամաս մտած ընտրողների հոսքը
- Խնդրեք ընտրողին, ներկայացնել Վրաստանի Քաղաքացու Ինքնության Վկայականը/ID Քարտը կամ Վրաստանի քաղաքացու Անձնագիրը
- Ուլտրամանուշակագույն լապտերով ստուգեք, նկատվում է, թե ոչ ընտրողի մոտ դրոշմավորում և այն բանից հետո, երբ կհամոզվեք, որ ընտրողի մոտ դրոշմավորում չի նկատվում, սվեք նրան քվեարկությանը մասնակցելու իրավունք
- Հետևեք, թե քանի ընտրող է կանգնած ընտրողին հատկացված գրանցման սեղանի մոտ: Եթե գրանցման սեղանի մոտ կանգնած է երկուսից ավելի ընտրող, ժամանակավորապես ձգձգեք քվեարկության շենք հերթական ընտրողի մուտքը
- Մատնացույց արեք ընտրողին, գնալ այն գրանցող սեղանի մոտ, որին պատկանում է համընդհանուր ընտրացուցակի մեջ մտցված նրա ազգանվան առաջին տառը

Ուշադրություն!

- Եթե ընտրողի մոտ չի հայտնվի Վրաստանի քաղաքացու Ինքնության Վկայական /ID քարտ կամ Վրաստանի քաղաքացու Անձնագիր, բացատրեք նրան, որ նա չի մասնակցի ընտրություններին: Խնդրեք, թողնել ընտրական տեղամասը
- Վրաստանի Ընտրական Օրենսդրության 185¹ Հոդվածով սահմանված կարգով ընտրություններին ձայն տալու իրավունք ունի ընտրացուցակում գրանցված Եվրամիության անդամ պետության քաղաքացին, ով ծնվել և վերջին 5 տարվա ընթացքում բնակվում է Վրաստանում: Այդպիսի անձը ընտրական տեղամաս ներկայանալիս՝ Վրաստանի քաղաքացու անձնագրի և Ինքնության վկայականի փոխարեն ներկայացնում է Եվրամիության անդամ պետության անձնագիրը:
- Եթե ուլտրամանուշակագույն լապտերով դրոշմավորում ստուգելիս բացահայտվում է, որ ընտրողն արդեն ունի դրոշմավորում, նրան արգելվում է քվեարկությանը մասնակցել: Ընտրողի ով լինելը տեղեկացրեք հանձնաժողովի նախագահին: Խնդրեք ընտրողին թողնել ընտրական տեղամասը:
- Ընտրողը, ով վերին վերջավորությունները չունենալու պատճառով չի կարողանում ձայն տալու ընթացակարգերը անկախորեն կատարել (ֆիզիկական վիճակ) չի անցնում դրոշմավորման ստուգում և դրոշմավորման ընթացակարգ: